



հարկ), կալուածական ամէն հարկերը, թէմէթիւն ևն. և այլն : Բայց Եւրոպայի դրամատէրերը մեզմէ խիստ աղէկ գիտեն թուրքիոյ ժողովրդի վճարելու կարողութիւնը, գիտեն որ ամէն ուրեք սոյն ու աղքատութիւնը կը տիրէ և վերջապէս գիտեն որ թուրքիոյ ներկայ ալեկոծ վիճակը չի կրնար երկար տևել և իրենց ստակին վտանգի մէջ կըլլայ միշտ . . . Այլևս ո՞վ կընէ այդ 3,000,000 ոսկիի՝ շուրջ 70 միլիոն ֆրանքի փոխառութիւնը : Երագիր կազմելը գիտին է, բայց իրագործումը տեսնանք : մանաւանդ որ թուրքիա արդէն 100,000,000 ոսկի պարտքի թուղթեր ունի :

Ազգային կեանքերնիս պարագէ . կը զբաղուինք Հիւանդանոցի Գարակէօզեան կուսկի, Իզմիրեանցի մրցանակի, թուրքիստէ մեռած որբիկներու խնդիրներով : Ասկէ աւելի աչքի զարնոյ խնդիրներ չը կան : Թմրութիւն ու հանգիստ մարտդութիւն, Ահա Օրմանեանի անհրաժեշտ երկու պարագաներն ալ այժմ կայ :

ԲԱԺ

ՍՈՒԽԻՆԱ . 28 Փետրուար

Ուր որ կը գտնուի խումբ մը հայ և եկեղեցի, անշուշտ եկեղեցիին և կրթական հաստատութիւններուն գործերը վարելուն համար ազգային մարմնոյ մը անհրաժեշտութիւնը կը զգացուի :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐԻՆԱ

ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ ՍԸ

1876ի ՊՈՒԼԿԱՐ ԱՊՐԻԼԵԱՆ

ՅԵՂ Ա Փ Ո Ւ Ո Ւ Թ Ե Ն Է Ն

(Շար. նախորդ քիւիկ)

Կիները, փոքրիկ երեխաները քնացնելէն յետոյ, սկսան մրափել . Իրինա, աննկատելի կերպով, աս արբած միջավայրէն դուրս սպրդեցաւ և վերը իր սենեակի մէջ գոցուեցաւ : Ամբողջ գիշերը չի կրցաւ քնանալ . վերադառնալով զգացումները աննկարագրելի ցաւեր պատճառեցին իր սրտին . իսկ միւս կողմէն ալ անորոշութիւնը զինքը կը տանջէր : Թրնովայէն դուրս ինչեր պատահած ըլլալուն ոչ մի ստոյգ տեղեկութիւն ունէր—երեք օր է որ հօրմէս լուր մը առած չեմ, ո՞ւր է արդեօք—ինքնիրեն կը հարցնէր ան : Գործի յաջողութեանը վրայ մեծ հաւատք ունէր, բայց իր գլխուն մէջ «Վարդուած», «մատնուած» բառերը անդադրու-

Սուլինայի մէջ բաւական թուով ընտանեօք հայեր կը գտնուին . բացի ատոնցմէ և գործաւորներ որոց թիւը 600ը կանցնի . կայ մատաղ սերունդ մը որ հայ կըրթութեանէն զուրկ կը մնայ : Արդեօք այդ խեղճ մանուկներ միշտ զուրկ պիտի մնան մայրենի լեզուէ, թէ չէ տեղւոյս հայութիւնը պիտի աշխատի անոնց գլխինը օտար նախապաշարութեան պահով :

Անցեալի մասին խօսել չեմ ուզեր, «Շարժում» ընթերցողներուն ձանձրոյթ չի պատճառելու համար . բայց հիմակ հարկ է որ հայերը հետաքրքրուին ազգային գործերովը :

Օգոստոսին եկեղեցւոյ հոգաբարձուներէն մին հրաժարեցաւ և մինչեւ օրս ուրիշ ընտրութիւն մը չէ եղած : Ու հասարակութիւնն ալ սկսած է սառն կերպով վերաբերիլ դէպի եկեղեցիին, և եկեղեցիին ալ պարտքի տակ ինկած է :

Վստահ եմ որ կոչս արձագանք պիտի գտնայ, ուստի կը հրաւիրեմ մեր ազգայինները շտապել անցեալ տարուայ հաշիւները կարգադրել, նոր թաղական խորհուրդ մը ընտրել ի հարկէ կանոնաւոր կերպով : Եւ ան ատեն ապահով ենք որ մեր երիտասարդութիւնն ալ իր պարտականութեանց մէջ չի պիտի թերանայ և ձեռք ձեռքի տուած պիտի յաջողի գոնէ մանկապարտէզ մը բանալ :

ՀԱՄԱԶԱՍՊ

—)(—

պտոյտներ կընէին, Այս սոսկալի մտքերը զինքը իր տեղէն կը թոցնէին, թէեւ իր ուժերը ամփոփելով կարող կըլլար զանոնք վանել : «Անկարելի է, ամէն տեղ կ'օմիթները լաւ կազմակերպուած էին ազգը զինուած է, մէկ մարդու պէս ոտք պիտի ելլայ, ինչպէս որ ելաւ» :

Հիմակ անոնք կը կուռնին . . . իսկ ինք հեռու է ատ սրբազան կոնիւնրէն . . . ահա Իրինան այս բարոյական ասանջանքին ենթարկուած էր :

Շարժ մը առաջ իր դրացին առաջարկած էր զինքը Պալքանը տանել խումբին հետ . բայց նա մերժեց, որովհետեւ հոս աւելի պէտք էր հոս, Պուլկարիոյ աւանդապահ մայրաքաղաքին մէջ, ինքը առաջինը պիտի ըլլար ազատութեան գրօշակը պարզողը . ինչ երջանկութիւն ! Բայց ո՞ւր մնային . ինչո՞ւ չեն երեւնար, կը մտածեր որ ալ ժամը հասած է, երբ պիտի հասնի . . . Ինչո՞ւ առջափ ծանրաշարժ ու հոգետանջ կը սահի ատ երկար ժամանակը, գործը յետաձգում չընդունիր . ժամերը որդի պէս կը սողոսկին, ծոյլօրէն ու անչափ համարաշայլ, որչափ որ իր անհամբեր սիրտը կը արօժիէր :

Նա կը սպասէր յեղափոխութեան ժամին . բայց ժամը արդէն հնչած էր և նա զայն ձեռքէ փախցուց : Ճիշդ այսօր անվճարականութեամբ ձեռքէ

«ԲՐՈ ԱՐՄԷՆԻԱ»



Ստացուեցաւ «Բրո Արմենիա»ի Տրդ թիւը, ուր նամակներ կան Սուչէն և Տրապիզոնէն որոնց մէջ կը նկարագրուի այդ երկու նահանգներուն վիճակը . նոյնպէս յօդուած մը Սպաղանքի կոտորածի մասին որուն մէջ որոշապէս կը պարզուի թէ այդ եղեռնագործութիւններու շարքն ալ կ'ստարուած է կառավարութեան թելադրութեամբ :

Յարգելի խմբագրութիւնը մարտ 2ին Բարիդի մէջ տեղի ունեցած հայ երեկոյթի մասին գրելով և իրեն ուղղուած ուղերձի առթիւ շնորհակալութիւն յայտնելով կը յայտարարէ հետեւեալը .

«Մենք պիտի շարունակենք աւելի եռանդով պաշտպանել այս ժողովրդի դատը, որը երկայատեն սանջուած և հիմա ալ ստրուկ մնալ չուզեր» : Մեզ համար մասնաւորապէս մեծ հաճոյք պատճառած է այն որ ուղերձի տակը ստորագրած են հայ ժողովրդի բոլոր կարծիքներու և կուսակցութիւններու ներկայացուցիչները :

Մեր բարեկամ հայերը լաւ ըմբռներ են որ մեր առաջին պարտականութիւնն էր տեղեկութիւն տալ անոնց որոնք կուզեն մտիկ ընել, բայց ոչ խառնուիլ անոնց զանազան կուսակցութիւններու ներքին կարգապահութեան վերաբերիլովէն :

Մենք սրտանց շնորհակալութիւն կը յայտնենք անոնց և կը

փափագինք որ անոնց մէջ ամէն կէտերու վերաբերմամբ համաձայնութիւնը տիրէ, ինչպէս այս խնդրի մէջ» :

Խմբագրութեան մասուցուած ուղերձէն հետեւեալը կը քաղենք . «Աշխարհի ամէն կողմերէն մեր հայրենակիցները խանդաղին ուղղունցին ձեր կորովի օսկանի երեւումը, որովհետեւ անիկայ նոր երեւոյթ մը կը ներկայացնէ, մեր ժողովրդի եղբրական պատմութեան մէջ : Այս շարժումը որ մինչեւ ցարգ կ'զգիացած էր, այժմ համաշխարհային կերպարանք կ'առնէ և պիտի շահագրգռէ բոլոր ժողովուրդներու հասարակական կարծիքը :

Իսկապէս սխալ պիտի ըլլար կարծել թէ Հայաստանի դժբաղտութիւնները ամբողջ աշխարհի ծանօթ են և թէ հայկական դատը գրաւած է քաղաքակիրթ մարդկութեան բոլոր համակրանքը որուն իրաւամբ արժանի է : Մինչեւ ցարգ Եւրոպայի մէջ կային լաւ տրամադրութիւններով, բայց սխալ տեղեկութիւններով հրապարակագիրներ, որոնք չափազանցուած կ'ընկատեն հայկական կոտորածներու լուրերը և որոնք նոյն իսկ հայերը պատասխանատու ճանչնալու չափ կը յառաջանային : Եւ միթէ աղբեցիկ մամուլը չ'արգերու շուրջը լուրթեան իսկուկուն դաւադրութիւն մը չէ՞ր կազմակերպած» :

—)(—

չակուած երանելի օրը՝ սեւ աղէտներու սկզբնապատճառ եղաւ :

Երեք օր շարունակ պուլկար ժողովուրդը ոչխարի պէս մորթելու կը տանէին . բանտերը լիկ լեցուած թակ կախաղանները՝ Թրնովայի փողոցներն ու շուկայներն մարդկային մասվաճառանոցի կերպարանք կ'ստանային : Ոչ ոքի կեանքն ապահով էր . պուլկարի մը հողին մազէ կախում ունէր, ամենաքոտտ խեղճ թուրքը ու գնչուն իսկ քրիստոնէայի կեանքին վրայ իշխանութիւն ունէր : Թալանը, առեւանգութիւնը, բռնաբարութիւնը միայն թիւրք հովանաւորութեան տակ ապրող քրիստոնէաները կարող են երեսակայել թէ ինչ աստիճանի վայրագութիւններով կը սկսուի . . .

Ժողովուրդը ամէն ժամ թուրք խուժանի, զինուորներու ու զաւթ թիէներու խուժումը կը սպասէր . պուլկարը վախէն չէր համարձակեր իր տունը ճրագ վառել, չըլլայ որ գուրը շրջող սովալուկ պահապանը զօրքերու ուշադրութիւնը հրաւիրէ : Քաղաքացիները պարտուէր էին արեւը մարը չի մտած պատկիլ, որովհետեւ պուլկար տան մը մէջ կեանքի փոքր նշան բաւական էր անկող հիւրերը հրաւիրելու : Արթուր ոտակալութիւնը իսկոյն ներս կը խուժէր քօմիթա փնտնելու պատրու-

ՎԵՐԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐ

Նախորդ գրութիւններու մէջ մենք տեսանք թէ գաղթականները մեծ մասամբ հնէն գաղթած են եւ երկրի հետ տնտեսական ոչ մի կապ ունին. նորեկներն ալ հայրենիքի մէջ սակաւաճող են եւ կամ թալանուած ու այժմ հազարումի նեղութիւններով կարողացեր են ապրուստի մի ճամբայ գտնել. իրաւ է որ ապագանին շատ խախտ է, բայց զեռ տարիներով կրնան գիտնալ, ինչ կը լինի անոնց գրութիւնը. եթէ երկիր փոխադրուին խմբովին եւ բռնի կերպով Արմատաւորները եւն. ըսինք թէ մի կերպ կը դիմանան եւ չեն մեղմիր, բայց անհող գիւղացիները ո՞ր գնան. ինչպէս ապրին, իրենց ձգած մարտապայքը վաղուց ուրիշները բռնած են. եթէ մի օր տեղի ունենայ այդ արտաքսումը գաղթականներու մեծ մասը պիտի կտորուրի անօթութենէ եւ հիւսնորութիւններէ. ինչպէս ժամանակին կտորուեցան Տաճկաստան գաղթող չէրքէչներն ու արտադները, որոնք այն մեծ առաւելութիւնն ալ ունէին որ թուրք կառավարութեան պաշտպանութիւնը կը վայելէին եւ անմիջապէս հողեր ստացան. իսկ ոռւս կառավարութեան հողը չի պիտի ըլլայ թի հայերը անգին ինչ պիտի լինին.

Ահա այդ պատճառներով է որ երբ 1898ի մարտ 25ին Չարի անունով հրաման ելաւ որ մինչեւ մի տարի հայ գաղթականները պէտք է վերադարձուին երկիր, ընդհանուր սարսափ պատեց գաղթականներուն, Հրամանը շատ անորոշ ձեւակերպուած էր. պարզ գրուած չէր թէ միայն կտորած է վերջ գաղթողները եւ անցագիր չունեցողները պիտի սրտաք-

նեկաւ, եւ ան ատեն վայ անցիւրուն...

Փողոցները մարդ կը բռնէին, կը բանտարկէին, կամայականութիւնը, բռնութիւնը, սպանութիւնը չափ ու սահման չունէր:

Այդ ահաւոր փոթորիկը Ապրիլեան աղետաւոր Յեղափոխութիւնն էր:

Գարնան նորաբողոք ծաղիկներու բուրումովը ու ձմեռնային քունէն արթնող կոյս բնութեան բոլորով Պալքանը, իր վէս գագաթին վրայ պուլկար անդրանիկ ու փառապանծ յեղափոխութեան Գրոշակը բարձրացուց:

Բանակիւրիւշթէի սարերէն կերասի թնդանօթի պայթումը երկնային երևույթ մըն էր, զարեւոր ստրուկ ժողովուրդը արեան նախճիրներու մէջ մխելու, ինքզինքը իր հայրենաւանդ իրաւունքներուն տէրը հռչակելու համար:

Շարժեցաւ նա եւ իր զարեւոր բռնաւորին դէմ առ դէմ ելաւ, յուսահատ գիւցազնական մաքառումէ յետոյ, ներկեց կուռի գաշտը իր լաւագոյն զաւակներու արիւնովը:

Ապստամբութիւնը՝ համատարած կատաղի հրդեհի մը պէս իր բոցերովը բորբոքեց, վառեց եւ ամէն ինչ լափեց...

սուէին, թէ բոլորն ալ անխտիր Սոխումէն գաղթականներու միխումը հեռագրով դիմեց Մշակին եւ բացատրութիւն խնդրեց. Թիֆլիսի բարձրագոյն կառավարութիւնը որոշ պատասխան չի կրցաւ (կամ չուզեց) տալ. միւս նահանգապետներն ու գաւառապետները միայն գիտէին որ այդպիսի հրաման ելած է, սակայն մանրամասնութեան տեղեակ չէին: Այնպէս կը կարծուի թէ կեդրոնական իշխանութիւնը զիտամբ այդ կէտերը անորոշ ձգած էր. որպէս զի ի հարկին փոփոխութիւններ կատարէ առանց իր կայսերական վարկը ձգելու: Սկսան ցուցակագրել բոլոր գաղթականները. Բագուէն, Թիֆլիզէն բաւական թուով Հայաստանցի գաղթականներ մեկնեցան հայրենիք. բայց հազիւ առաջին խումբը երկիր մտած էր, թուրք կառավարութիւնը արգիւտեց միւսներու մտաքը: Սեւ ծովի ափերէն որոնք որ արգէն մտադրած էին գնալ, օգտուեցան ընձեռուած գիւղութիւններէն եւ ածան կերպով անցան գնացին. Ռուս կառավարութիւնը յանկարծ վերջացուց երթալու գիւրութիւնները եւ նոյնիսկ արգելք եղաւ առանց անցագրի գնացողներուն, պարզ էր որ չէր կամենար գաղթականներու ինքնայոժար մեկնիլը, որովհետեւ թուրքը ճնշելու այդ կարեւոր զէնքը կը թուլանար հետզհետէ:

Յետ ճամբելու խնդիրը օտար ցեղերու կողմէ հայերու դիւրին նորանոր անարգանքներ թափելու ասիթ եղաւ. թուրքերը, մինկրէնները ու մանաւանդ յոյները սկսան ուրախանալ որ հրապարակ իրենց պիտի մնաւ եւ յոխորտով գաղթականներու վրայ՝ «տեսէ՛ք ոչ մի տեղ պատիւ ունիք, Ռուսը անգամ ձեզ կը վռնտէ»:

Իսկ կարգ մը չինովիկներու, ոստիկանական ստորին պաշտօնեաներու համար կամայականութիւններու դուռ բացաւ:

Բախումի մօտ Կօպուլէթի (չու-

րուքսու) նաչալիկը 1898 նոյեմբերին տակն ու վրայ բրաւ Ախալքէն ու Սոխումնա ուր գիւղերու գաղթականները, ստիպելով 1-2 օրուայ մէջ Բաթում փոխադրուիլ եւ Տրապիզոնի նաւը նստիլ. զուր տեղ գիւղացիները յայտարարեցին թէ զեռ պայմանութեանն համար եւս կայ, ի զուր խնդրեցին գոնէ 15 օր միջոց տալ, որ բերքերը կտրագործեն եւն. նաչալիկը սկսաւ մղտրակել եւ Բաթում քշել. Բաթումի մի քանի ազգեցիկ ոռւսահայեր միջամտեցին եւ յաջողեցան նաչալիկի ետանդին չափ դնել:

Սօխումի նաչալիկը 1899ին մարտին, հիմնուելով մի տարի առաջ հրատարակուած հրամանի վրայ, կարգադրեց բոլոր նորեկ գիւղացիները քաղաք բերել եւ նաեւ լեցուցուելով զրկել Բաթում-Տրապիզոն ստիկաններ պաշիպօզուքներու պէս գիւղերը թափուեցան եւ սկսան ծեր տղայ, կին քշել քաղաք: Սօխումէն մէկ ժամ հետո Պուրճ գիւղի մէջ մի հիւանդ ծերունու (կարծեմ Պաղտասար անուն) եւս ազդարարեցին երթալ քաղաք եւ ապա Տաճկաստան: Խեղճ ծերուկը իր զաւակները տուած էր Տրապիզոնի կտորածին եւ այժմ ծանրաբեռնուած բազմանդամ ընտանիքով կուլայ, կողբայ իրենց չնորհ ընել եւ սոված վիճակի մէջ չի ձգել Տաճկաստան. ստիկանատան ստորին պաշտօնեաները չեն զիջանիր. հիւանդ ծերունին յայտարարելով որ ստած թշնամիներու ծաղրին տակ սոված մեռնելու տեղ աւելի լաւ կը համարէ այստեղ մեռնիլ, կանցնի միւս սենեակը եւ հրազէնը ճակտին դարպելով անձնասպան կը ըլլայ. երանի թէ մի ստիկան ստիկեցնելէ յետոյ անձնասպանութիւն գործէր:

Այդ ժամանակ Սօխումը սլտաճմիկ տեսարան կը ներկայացնէր, կարծես Շահ-Աբրահիմ օրերն էին. գիւղացիները աման չամանով, աղքատիկ կահ կարասիներով թափուած

էին քաղաք եւ լաց ու կոծով բռնած էին չորսդին: Ըխտախտի վաճառականներէն մին հիսուսաբով դիմեց ներքին գործերու մինիստրութեան եւ խնդրեց կարգադրութեան փոփոխութիւն. Մինիստրութիւնը հեռագրեց որ «արդէն յետաձգուած է»:

Սիւնիկ ի վեր ձայն ձուռ չկայ վերադարձի համար. կը կարծուի թէ թուրք եւ ոռւս կառավարութիւններու մէջ գաղտնի բան մը կանցնի կը գտնանայ, թուրք կառավարութիւնը 1899 յուլիսէն սկսեալ անպայման կերպով արգիւտեց հայերու Ռուսաստան երթելու թիւնը. այդ արգելքը հայերուն նիթապէս վնասելով հանդերձ, մի խիստ պատուախան էր ոռւս պահանջումներուն եւ ոռւս զիւանագիտութիւնը կլլեց այդ անարգանքը. գուցէ վնասուողները իր չը սիրած հայերը լինէին ոռւս Գաղթականներու վերադարձի հարցն ոռւս կառավարութեան ձեռքը մի նոր զէնք ըլլալը թուրքին դէմ, յայտնի եղաւ Չինովիկի նօթաներով.

սակայն այնքան ալ անհաւանական չէ որ մի օր ոռւսները ուզեն իրադրծել արտաքսման հրամանը. արդեօք գաղթականներու օգտին հաւաքուած 50,000 բուպլի դրամին այնքան անխղճմտօրէն կովկասեան կառավարչապետի մօտ փակուած պահելը, մի նախազգուշութիւն չէ՞ ի հարկին գաղթականներու նաւավարձերը անկէ տալու համար: Տաճկահայերու արտաքսումը գէ՛մ է միջազգային օրէնքներու, որովհետեւ ասոնցմէ չաօք կանոնաւոր անցագրեր ունին եւ մի նեղ հարուած թուրքին դէմ, որովհետեւ այդ սոված ու քիչ շատ ազատ կեանքի համը ստած ումբուր մի նոր փորձանք պիտի լինի թուրք կառավարութեան գլխուն. հային դէմ, որովհետեւ 21,000 հոգու անտեսականը բոլորովին պիտի փշանայ եւ կէսէն աւելին ճանապարհին կամ տեղ չի հասած պիտի ոչնչանան միւս կողմէ Սեւ ծովի ափին նոր

Պալքանը, Սրէտնակօրան ու Ռօտօրը զիրար ողջունելով եւ իրարու ձեռք սեղմելով առաջինը նետուեցան այդ ահաւոր կրակին մէջ, իսկ Թուրճան եւ Մարիճան կատարուած պրծալի գազանութիւններու եւ ոճիրներու անմեղ ու արդար արիւնը իրենց ջուրերուն մէջ առնելով, սգուրոր ալիքներովը զէպի ծովու յատակը քշեցին:

Պալքանը, Սրէտնակօրան ու Ռօտօրը զիրար ողջունելով եւ իրարու ձեռք սեղմելով առաջինը նետուեցան այդ ահաւոր կրակին մէջ, իսկ Թուրճան եւ Մարիճան կատարուած պրծալի գազանութիւններու եւ ոճիրներու անմեղ ու արդար արիւնը իրենց ջուրերուն մէջ առնելով, սգուրոր ալիքներովը զէպի ծովու յատակը քշեցին:

Ազէս, կործանում, սոսկում, ամէն տեղ, եւ ամէն մի անկիւն, ժողովուրդը իր ցաւերէն սարսափած, չէր գիտեր ինչո՞վ միխթարուի. նա զինքը յուսախաբութեան ենթարկող զեկավարներուն գլխին անէծք կը կարգար, նախատինք կը թափէր, Բայց անգիտակցօրէն աններելի սրբապղծութիւն կը գործէր իր ազգային սրբութիւններու դէմ. այդ զեկավարները իր ծոցէն եւ ազգի էն ընտրելի զաւակներն էին: Նա իր արիւնովը զանոնք սնուց, եւ իր չնչովը անոնց քարոզներուն կենդանութիւն տուաւ եւ վերջապէս Օպօրիշիի (՝) մէջ ազգային ընդհանուր

անունով ընդհանուր գումարում մը ըրած են, երկրի ամէն մի վայրէն ու անկիւնէն ներկայացուցիչներ կանչելով եւ հոս վերջապէս վճռուած է միաձայն հաւանութեամբ 1876 մայիս 1ին ընդհանուր ապստամբութեամբ Պուլկարիան ոտք հանել: Սակայն Բանակիւրիւշթէն կանխեց պայմանագրեալ օրը, եւ 1876 ապրիլ 20ին, հոն յանկարծ յեղափոխութիւնը պայթեցաւ, առաջի անգամ գործածելով կերասի թնդանօթի ոռւմը. եւ աս նշան եղաւ միւս յեղափոխութեան կեդրոններուն ընդհանուր շարժում: Ապրիլեան յեղափոխութիւնը պուլկար պատմութեան էն արեւնոտ ու սրտամորմոք էջը կը կազմէ: Ոյովհետեւ շատ մը կեդրոններ, ահաւոր ու խնամքով նախապատրաստութիւններ ունենալով հանդերձ, այդ բոլորէն անպատրաստ գտնուեցան ու աննկարագրելի կորուստներով ու զոհերով յեղափոխութեան դրօշը պարգե-

(՝) Օպօրիշի ըստուած վայրը, Բանակիւրիւշթէն 2-3 ժամ հեռու է, Պալքանի նուիրական ծոցը, կուսական ամենի անտաններով ծածկուած, գրաւիչ ու վայրենի ձորի մը մէջ: 1875ին ամառը պուլկար յեղափոխականները սիւրբագոյն Ազգային ժողովը

Բոնաւոր-տէրը զօրաւոր էր, ապստամբ զերին անպաշտպան էր, այսպէս պէտք էր ըլլար:

Ահա ատոր համար ծխանները ու օջախները մոխրով ու արիւնով շաղախուած, մոռլ փլատակներու կոյտ մը կը ներկայացնէին:

Թարգ. Պ. Ս. (Շարունակիլի)

ցին: Ստ շարժման նշանաւոր զեկավարները են Պէնքօվիկին, Գապլիշքով, Պօպիքով եւ Լէվաքին (պուլկար յեղափոխական էն պատկառելի դէմքերը... տես անցեալ տարուան Շարժումի մէջ «Հինգ զէմքեր պուլկար յեղափոխութիւնն»...)

Երախտապարտ հայրենիքը կուզէ անմոռաց պահել իր զաւակներու յիշատակը, եւ ներկայ 1901 ապրիլ 20ին Ապրիլեան յեղափոխութեան քսանհինգամեայ յորելեանը պիտի տօնեն, որուն պիտի մասնակցի ամբողջ ազգը ու կառավարութիւնը:

Հանդէսին օրը, ազգային տօնը յաւերժանելու համար, ընտրեալ պատգամաւորութիւն մը, երախտագիտական ծանրագին ընծայ պիտի մատուցանէ Փեթերպուրկի Չարին, եւ Սօխա Աղլքաւոտոր Բ. ազատարարին անուամբ փառաւոր արձան մը պիտի կանգնուի:

հաստատուելիք ուս գաղթականները պիտի ազատին հայ տարրի մրցութեանէն: Մէկ քարով երեք թռչուն գարնել կը ըսեն ասոր եւ այդ սխալմով է որ թուրքին հրահանգ տուաւ կոտորելու հայերը, որ երկու կողմն ալ ծանրագէտ տկարանալով ինք օգտուեալ սակայն Գերմանիան աւելի ճարպիկ գանուեցաւ եւ սուս ազգի ճակատին գրոշմուեցաւ մի սոսկալի արատ, որը չեմ գիտեր մի օր պիտի կրնա՞ն սրբել անոր ազնիւ տարրերը:

Գաղթականները թուրք ալ կը փափաքին վերագրանալ հայրենիք այժմ շատ լաւ հասկցեր են որ իրենք ապուստ չունին օտար հողի վրայ: պայց կուզեն վերստանալ մի հայրենիք ուր կարգ ու կանոն հաստատուած լինի եւ սեփականութիւն ունենան մշակելու եւ զարգացնելու համար: Սաստիկ հետաքրքիր են օրուայ թաղաքական հարցերուն շարունակ հայկական խնդրի մարին լուր կը հարցնեն եւ ամէն մէկու բերանէն կը լսենք միշտ այս խոսքերը. «փոսեցանք այս կողմերը բուն մը ըլլաւ օր առաջ ու անցնէինք երթագիրք հայրենիք» եւ ջերմ հաւատ ալ ունինքս մը ըլլալուն:

Ն.ՈՒՍ.Կ.

Թւոտտար, 10 Յունվար

**ՎԱՌՆԱՅԻ ՈՒ ԲԱՆԱՄԻ ՍԻԿԱՐԻ ԹՈՒՂԹԸ**

Անցեալ օր տեղւոյս որբախնամ ընկերութիւնը սիկարի թուղթ մը վաճառելու նպատակով հրապարակ հանած ըլլալուն համար յայտարարութիւն մը գրելով էր մեզի տպագրելու: Երկու օր վերջը ուրիշ նամակով մը ընկերութեան վարչութիւնը կը խնդրէր այդ յայտարարութիւնը չը տպագրել մինչեւ ցնոր կարգադրութիւն: Ճշմարիտն ըսած որչափ որ առաջին յայտարարութիւնը մեր վրայ գէշ տպաւորութիւն գործած էր, նոյնչափ ալ ազէկ տպաւորութիւն թողոց պայն չի հրատարակելու ինչ որը, որովհետեւ մենք կարծեցինք թէ վարչութիւնը ըմբռնած է իր սխալ քայլ ընելը:

Այսօր նորէն այդ յայտարարութիւնը զրկուած է մեզի, որուն մէջ կը յայտարարուի թէ միայն քանի մը ամիս, փորձի համար պիտի ծախուի այդ թուղթը:

Ահա թէ ինչու այդ թուղթը հրապարակ հանելը մենք գէշ կը համարենք, առանց մտադրութեան ունենալու վարչութեան անդամները մեղադրելու անձնական գծով հաշիւներու մէջ:

Յայտնի է որ արդէն Ազգ. Հիւանդանոցի թուղթը կայ, եւ ատանկ հաստատութեան գէմ մը ցում ընելը որբասէրներու կողմէ յանցանք է, գուցէ եւ անդիտակցար գործուած, բայց արդիւնքը միշտ նոյնը. ուստի այդպիսի անյարմար ձեռնարկութիւն մը, որբասէրներու ձեռքով, որչափ ալ միամտարար հնարուած ըլլայ բռնի կասկած մը կը յարուցանէ

թէ սեփական շահերը մեծ դեր կը խաղան այդ թուղթը հրապարակ հանելու մէջ:

Մենք կուզենք հաւատալ որ որբախնամները անձնական շահով չեն զեկավարուած այդ անօգտակար գիտը հնարելու մէջ եւ մեծ յոյսով ենք թէ՛ անոնք երրորդ յայտարարութիւնը կը զրկեն որ թուղթի խնդիրը, նոյն իսկ առանց փորձ մը կատարելու բուրսովին ջնջուած է:

Այս տողերը մենք կը գրենք իրեն որբախնամի վարչութեան յայտարարութեան մէջ զետեղուած հետեւեալը հիմնական կէտի վրայ հիմնուած:

«... Որպէսզի իր հրապարակ հանած սիկարի թուղթի սպառումը մէկ քանի ամիսներ շարունակուի, նկատելու համար թէ՛ ազգ. երկու թուղթերէն—Հիւանդանոց եւ որբախնամ—որը աւելի հասոյթ կը յայտնուի, հետեւաբար եւ աւելի նպատուար դառնայ մեր թշուառ որբակներուն» Ահա անտեղի մրցութիւն մը:

**Ն Ա Մ Ա Ա Ս Ո Ւ Փ**

Վ.ՈՒՍ.Ա. Կ. Մ. Ն. — Ձեր թուրքերէն լեզուով գրած պատասխանը «Իրաւունք» Ս. Օտապաշեանի մասին գրուածի գէմ, շաբաթ օրուան Յաւելուածի մէջ պիտի հրատարակենք:

**ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒՆԻԿ**

Մինչեւ հիմա Պոլսոյ ազգային հիւանդանոցի մէջ երեք որբ մեռեր են թոքախտէ սրունք ուրիշներէ վարակուած են:

Հիւանդանոցի վարչական շրջաններու մէջ կը խորհուի հիւանդանոցի շրջափակի մէջ առժամանայ փայտեայ շէնք մը շինել 130 որբ ազգիները հոն փոխադրելու նպատակով: Ամէն պարագայի մէջ Կարակէօզեան գումարի տոկոսը հիւանդանոցի հոգաբարձութեան պիտի յանձնուի եւ փափաք պիտի յայտնուի որ որբերը հիւանդանոցի շրջափակէն չը հեռացուին:

— Պատրիարքարազը հեռագիր մը ընդունած է որ տրապիզոնցիները իրենց սառչնորդ ընտրեր են Բարկէն վարդապետը: Տեսնանք պատրիարքարանը եւ թուրք կառավարութիւնը այդ ընտրութեան հետ ալ սոյնպէս պիտի վարուին, ինչպէս վարուեցան Իզմիրլեանի Եղիպտոսի առաջնորդ ընդունելուն ժամանակ:

— Փամաւակին հայ հանդէսներ հրատարակող Ստեփան Ոսկան մեռեր է Իզմիրի մէջ, Վերջին տարիներն հանդուցեալը

Իզմիր քաղաքում էր, հայերէն հեռու կապէր, ե հոն Թրանսկերէն լեզուով թերթ մը կը հրատարակէր աւելի քաղաքական լուրերու նուիրուած:

— Ալէքսանտրիա բնակող հայ մը հարիւր ոսկի նուիրեր է Պոլսոյ ազգային հիւանդանոցին առանց իր անունը յայտնելու:

Եթէ չենք սխալիր, առաջին անգամ է որ հայ մը այդչափ դուրմար առանց իր անունը հրաշակելու կը նուիրէ բարեգործութեան:

— Թիֆլիսի հայոց Կոնսիստրեան ուսու կրթական նախարարութեան գէմ դատ բանալով գրաւուած եկեղեցապատկան կալուածները համար, որոնց հասոյթով հայ դպրոցներ կը պահուէին, յաջողութեամբ կալուածները ետ առնել:

— Վերջին «Անահիտ» 45 սիւնակներու մէջ Ա. Չօպանեան նկարագրած է Արփիարի էութիւնը, Չօպանեանի նկարագրած Արփիարը նոյն վառ տիպն է, ինչ որ մենք մինչեւ հիմա նկարագրած ենք: Չօպանեան միայն Արփիարի մատնիչ ըլլալուն չի հաւատար եւ կանխաւ ինքզինքը կարդարացնէ այսչափ ուշ խօսած ըլլալուն համար:

Մենք այ համոզուած էինք որ Չօպանեան գիտէր Արփիարի ինչ ըլլալը եւ ճիշդ անկեղծութեամբ սքողուած այդ միակողմանիութեանը համար էր որ զինքը ձաղկած ենք միշտ:

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

**ՊՈՒՂԱՐԻԱ**

Նախարարապետ եւ ելեւմտից նախարար Պ. Բարապէտով, որ նոյնիսկ պուլկարներու մէջ իրաւամբ ելեւմտագետի մը համար կը վայելէ, ծրագրած է երկրին պիւտեճէն յապուել, մանաւանդ զինուորական պիւտեճէն 0/0 20 համեմատութեամբ, որպէս զի գուրսէն փոխառութեան մը գիմելու հարկ չի մնայ: Պատերազմական նախարարը, կըսուի թէ չուզէր բանակին պիւտեճէն ու է բան մը զեղջել:

Նախարարութեան ծոցին մէջ իսկ անհամաձայնութիւն մը կը նշմարուի ուսաստէրներու եւ Աւստրիայ կուսակիցներու միջեւ:

— Իրէնս Պորիսի հիւանդութիւնը այլեւս ապաքինման շրջանին մէջ մտած է:

**Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ**

Լօրտ Բիչներ կը հեռագրէ թէ Յրէնջ կուրի մը մէջ 46 պօէր սպաննած 146 գերի բռնած է. 200 հրացան 3900 փամփուշտ, 2400 ձի, 120 ձորի, 370 կով:

2500 ոչխար եւ 400 սայլ գրաւելով:

— Պօէրները հեռագրական թերթը կտրած ըլլալով՝ յարաբերութիւնները ընդհատուել են սրբելեւան գաւառներուն եւ Նաթալի միջեւ:

— Սկսուած բանակցութեանց մասին ոչ մէկ նորութիւն կայ, եւ այս լուրերը սկսած է ջլատել անգլիոյ հասարակաց կարծիքը, որուն խօստացած էին ներկայ շաբաթու մէջ իսկ այն խնդիրը վերջնականապէս լուծել, միւս կողմէ պատերազմի վայրէջ հասած լուրերը նորանոր կորուստներ կը պատճառեն ամէն օր, որոնք միջին հաշուով օրական 40 հոգի կը հասնին:

— Եւրոպայի սահմանադրութի վրայ նոր ընդհարումներ տեսնելու ներքին իրաւունքներ են: Քէկայի մէջ երեք սպաննուած եւ Եօթը վիրաւորուած ունեցեր են:

— Քարի մէջ ժանտախտը հետեւեալ կը ճարակի Եւրոպացիներու մէջ ալ, մինչեւ այսօր 37 հոգի մեռեր են:

— Ալլաուցիներն ալ սկսեր են հետաքրքրուիլ պօէրներու բազմութեամբ զրկելու են Բրիւլէրի, ուր իրենց հիացումը կը յայտնեն պօէրներու գիւցազնական քաջութեան վրայ, եւ յոյս կը յայտնեն թէ Լահէյի իրաւարար ատեանը մտաւորապէս պիտի վերջ տայ այնքան անարդար պատճառներով ծնունդ առած այդ կուրին:

**Չ Ի Ն Ս Ա Ս Ա Ն**

Չին կառավարութիւնը որոշած է Մանչուրիոյ նոր պայմանագրութիւնը շտորագրել, մինչեւ որ կարելի ըլլայ հասկնալ թէ՛ ի՞նչ հենարան պիտի կարողանայ գրտնել Եւրոպացիներէն, եթէ պայմանագրութիւնը բոլորովին մերժէ: «Նոյնատի» թերթը կը գրէ թէ տէրութիւններէն ոմանց հակառակութիւնը չի կրնար Ռուսիայ գործունէութեան արգելի հանդիսանալ, մանաւանդ, քանի որ ուրիշներ ալ համակիր են իրեն, եւ կառաջարկէ շուտով վերջ մը տալ այդ խնդրին:

— Վերջին հեռագիր մը կլամացնէ թէ նոր համաձայնութիւն մը Մանչուրիան կրկին Չինաստանի կը թողու, բայց անանկ պայմաններու մէջ, որ Ռուսիա գերիշխան տէրը կը մնայ ներկայ յացուցիչ կարգելով պաշտօնեայ մը՝ որ նոյն գիրքը պիտի ունենայ ինչ որ ունի Անգլ. Հնդկաստանի փոխարքան:

**Отговорникъ:**

Д-ръ МХГХРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.